




Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻՆ ՈՐՊԵՍ ՀԱՄԵՐԱԾԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՒՈՍ

Վարդան Այգեկցին ԺԲ/ԺԳ դդ. մեր արդյունավոր մատենագիրներից մեկն է, որի վաստակը տակավին ամբողջությամբ հայտնի չէ հայ գրականության պատմությանը: Նա հայտնի է եղել որպես առակագիր ու մի շարք կրոնա-քարոշական գրվածքների հեղինակ¹: Բայց նորահայտ նյութերի հիման վրա պարզվում է, որ նա ունեցել է նաև հանրային լայն գործունեություն, մասնակցել է իր ժամանակի գաղափարական այն շարժումներին, որոնք հուզում էին Կիլիկյան Հայաստանի հասարակայնությանը:

Վարդան Այգեկցին ծնվել է Մարաթայում, որը գտնվում էր Ասորիքի Դուք (Կիլիկյան ուղղափրությանը՝ Տյուք) գավառում: Այս շրջանում կային Մարաթա անունով մեկից ավելի բնակավայրեր². Վարդանը էր «ի Մարաթոյ Վերնոյ»³:

Ինչպես Այգեկցին ինքն է ասում իր հիշատակարաններից մեկում՝ հիշյալ Մարա-

թան նրա «բնիկ ժառանգություն»-ն էր⁴: **Բնիկ ժառանգություն** ասելով պետք է հասկանալ ոչ թե այն սեփականությունը, որ հայ հոգևորականը ժառանգում էր նույնպես հոգևոր կոչում ունեցող իր նախնիներից, ինչպես հակված էր կարծելու Ն. Մառը⁵, այլ, սովորական իմաստով, **հայրենի տուն՝ հայրենական կայված**, ինչպես էր, օրինակի համար, նույն Դուք գավառում գտնվող Ծովք դոշակը՝ Գրիգոր Պահլավունի և Ներսես Ծնորհալի եղբայրների համար⁶: Բայց չի բացաքսվում, որ Այգեկցին նաև հոգևոր հովիվ եղած լինի իր **բնիկ ժառանգության** (հայրենի տան) շրջաններում, որոնց բնակիչներին նա անվանում է «հոգևոր որդեակք իմ», ինչպես կոտանենք քիչ հետո:

Վարդան Այգեկցու կյանքի առաջին շրջանի վերաբերյալ մինչև այժմ ոչինչ հայտնի չի. եղել, բացի այն պատահական մանր տեղեկությունից, թե ուսանել է Արքակաղնիում⁷: Դրանից դուրս՝ միայն գիտենք, որ մեզ անհայտ պատճառներով նա հալածական լինելով իր բնիկ ժառանգությունից՝ 1210 թ. գնում հաստատվում է Այգեկի առապատում⁸, որը գտնվում էր Սև կամ Սուրբ

¹ Տես՝ Н. Марр, «Сборник притч Вардана материалы для истории средневековой армянской литературы», ч. I—III, С.-Петербург, 1894—1899.

² Հ. Հ. Տաշյան, «Ժողովածուք առակաց Վարդանայ. Նիսիքի պատմության Հայոց միջնադարեան մատենագրության ըստ հայագետ Ն. Մառի», Վիեննա, 1900:

³ Հստ Յակոտի՝ այս շրջանում գոյություն ունեին Մարաթա անունը կրող բազմաթիվ վայրեր, հմմտ. Н. Марр, I, 292, ծան. 4:

⁴ Երևանի Պետ. Մատենադարանի ձեռ. № 8356, էջ 151բ:

⁴ Տես՝ Н. Марр, I, 306.

⁵ Անդ, 294, ծան. 8:

⁶ Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, «Ծնորհալի և պարագայ իր», Վենետիկ, 1878, էջ 95—97: Բարգևն ծ. վ. Կյուլեներյան, «Ծովք, Ծովք-Տյուք և Հոռոմ-կալ», Վիեննա, 1904, էջ 18—18 և 41—44:

⁷ Տես՝ Н. Марр, I, 294.

⁸ Անդ, 306:

անվանվող լեռների (Ամանուսյան լեռների) մասերում:

Վարդան Այգեկցու ամուսնով ծանոթ գործերից մի մասը հայտնի կերպով նրա կյանքի այգեկյան շրջանից է, բայց մեծ մասի ժամանակն անհայտ է և կարելի էր ենթադրել, թե նրանց մեջ սակավ չեն այնպիսիներ, որոնք նախապեղծյան շրջանից են:

Այժմ, սակայն, նոր հայտնաբերված նյութեր հնարավորություն են տալիս հաստատելու, որ Վարդան Այգեկցին իր կյանքի նախապեղծյան շրջանում ունեցել է մատենագրական և հանրային շատ ավելի լայն ու արդյունավետ գործունեություն, քան կարելի էր ենթադրել: Նրա գրական աշխատանքների մեջ, որպես ժամանակաշրջանի պատմա-հասարակական իրադրության արտահայտիչ, մի իսկական գլուխ-գործոց է «Արմատ հաւատոյ» կամ «Համառատ հաւաքումն սրբոց վարդապետաց» անունը կրող անտիպ գիրքը, որի ավարտման տարին 1205 թվականն է և որի մեզ հայտնի օրինակների մեջ ամենալավը Երևանի Պետ. Մատենադարանի № 3295 ձեռագիրն է⁹:

«Արմատ հաւատոյ»-ն նվիրված է հայ եկեղեցու միաբնակ դավանության և նրա կարգերի պաշտպանությանը՝ «ընդդէմ երկաբնակաց և ամենայն հերձուածողաց»: Դա իր կառուցվածքով մի այնպիսի ժողովածու է, ինչպիսին էին անցյալից հայտնի՝ Տիմոթեոս Կուզի «Հակաճատութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» գիրքը և Կոմիտաս Աղեցի կաթողիկոսի օրով կազմված «Կնիք հաւատոյ»-ն, միայն ըստ բնույթի այն տարբերությամբ, որ մինչ դրանք գոտ և միմիայն դավանաբանական հարցեր են շոշափում, «Արմատ հաւատոյ»-ն միաժամանակ և՛ դավանաբանական, և՛ ծիսական խնդիրներ է ընդգրկում:

Մենք «Արմատ հաւատոյ»-ի մասին շուտով հանդես կգանք առանձին ուսումնասիրությամբ՝ նպատակ ունենալով նաև հրատարակության պատրաստել նրա քննական բնագիրը: Այսօր ուշադրություն ենք հրավիրում Վարդան Այգեկցու մի ուրիշ գրվածքի վրա՝ «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն», որը նույնպես պատկանում է նրա նոր հայտնաբերվող գրվածքների շարքին և գտնվում է Երևանի Պետ. Մատենադարանի № 8356 ձեռագրում:

№ 8356 ձեռագիրը շատ արժեքավոր նյութեր է պարունակում Վարդան Այգեկցու երկերից: Ընդօրինակված է 1322 թ. Կիլիկիայի Կամրիկ անապատում՝ ի ձեռն Ստեփանոս կամ Փանիկ դպրի (որդի Հովհաննես քահանայի և Զապյունի): Այդ մասին վերջինս գրում է իր կրկնակ հիշատակարաններում. «Որ արժանի արար զանարժան ծառայս իւր կատարել զգիր քարոզութեանն սուրբ վարդապետին Վարդանայ որ ի Մարաթոյ»¹⁰, «Որ արժանի արար զողորմելի մեղաւորս զՍտեփանոս տյանել ի կատարումն զաստուածելէն գիրս սուրբ վարդապետին Վարդանայ որ ի Մարաթոյ»¹¹: Իսկ Վարդանի գործերի վերջում հիշատակագրում է, որ ընդօրինակությունը կատարվել է հեղհեղ հեղինակի ինքնագրից. «Յիշատակ լիցի սա Ստեփանոսի և ծնողաց իւրոց: Զայս ի Վարդանայ վդ. ձեռացն ի գրածնէն եմ գրել, և Քրիստոսի փառք յաիտե[ան]»¹²:

Նշանակում է՝ այս ձեռագրով մեզ հասած նյութերը վավերական աղբյուրից են: Ընդօրինակության մեջ հավատարմորեն պահպանված են նաև բնագրերից շատերի վերջում գտնվող հեղինակային հիշատակագրությունները, որոնց կանոնադաշտնաձևը ուրիշ աղբյուրով:

Այս ձեռագրում գտնվող նյութերի մի մասը Վարդան Այգեկցու արդեն հայտնի գործերից են, թեև նորանոր խմբագրությունների ենթարկված: Այդպիսիներ են՝ «Վասն տասն վաճառականաց» առակը, 8 առակավոր քարոզները, «Բանք վասն տասն համարոյ», «Բանք ի խորհուրդ կատարման տասն թուին» և «Պատմութիւն վասն անքուն որդանցն»¹³:

Վարդան Այգեկցու մյուս գործերը նոր են հայտնվում այս ձեռագրով:

Դրանցից մի քանիսն «Արմատ հաւատոյ» ժողովածուն կազմելու նպատակով հավաքված նախնական նյութեր են, որոնք հետո, նոր լրացումներով, կազմել են նրա Ժ—ԺԶ գլուխները: Դրանք են՝ «Յատուածաշունչ գրոց վկայութիւնք վասն ծննդեանն և մկրտութեանն Քրիստոսի, զի պարտ է ի միում ատուր տանել ի վեցն յունուարի», «Յիւրիդ Աղեքսանդրոս հայրապետին» ի Թեոդոսի ի թղթէն, զի պարտ է ուտել ճրագալուցին ի իրկունն», «Վկայութիւնք ի սուրբ գրոց ընդդէմ նոցա որք ասեն թէ Քրիստոս ոչ եկեր զգառնն ի հինգշաբաթոյ երեկոյին», «Վկա-

⁹ «Արմատ հաւատոյ»-ի և նրա ձեռագիր օրինակների մասին տես նաև մեր հետևյալ հոդվածը՝ «Զել ուրբաթագեղ», Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1969, № 3(310), էջ 78—81:

¹⁰ Ձեռ. № 8356, էջ 130բ:

¹¹ Անդ, էջ 143բ:

¹² Անդ, էջ 157ա:

¹³ Անդ, էջ 1ա—130բ և 144ա—149ա:

յութիւնը յաստուածաշունչ գրոց, զի պարտ է գտորք պատարագն առնել անխմոր և ան-
շորք», «Յաստուածաշունչ գրոց վկայու-
թիւնը, զի պարտ է ասել զԽաչեցարն
[յ]ամենայն ատր ի դէմ որդոյ», «Վկայու-
թիւնը յաստուածաշունչ գրոց՝ վասն ուրբա-
թագելի զի սուտ [է] յամենայնի» և «Վասն
գատկի մատաղի, զի բարի է»¹⁴:

Վարդան Այգեկցուն պատկանող վերջին
երկու բնագրերն առանձին նյութեր են:

Դրանցից մեկը, որին մենք տալիս ենք
«Վասն անիրաւ բամբաստողաց եկեղեցոյս
Հայաստանեայց» խորագիրը, — որովհետեւ
ձեռագրում խորագիր չունի¹⁵, — իր բովան-
դակութեամբ պատկանում է «Արմատ հա-
ւատոյ»-ի շրջանակին, բայց նրա մաս չի
կազմում, օգնում է լուսաբանելու այն խըն-
դիրները, որոնք առիթ են տվել «Արմատ
հաւատոյ» ժողովածուի առաջացմանը: Դա
մի գրություն է՝ ուղղված քաղկեդոնամիտ
հայերին, այն «դիւաբերան և շատահաջ»
մարդկանց, որոնք բամբաստում էին, թէ
«Հայք տգէտ և վերջին ազգ են»:

Մյուս բնագիրն է՝ «Վասն շատահաջ քն-
նողացն յանդիմանութիւն»¹⁶, որն արժանի է
հատուկ ուշադրության, որովհետեւ իր բնույ-
թով ու բովանդակությամբ բոլորովին տար-
բերվում է նախորդ բնագրերից:

Վարդան Այգեկցու «Վասն շատահաջ
քննողացն յանդիմանութիւն» գրվածքը մի
ընդարձակ նամակ է, որի սկզբնավորու-
թյունն է՝ «Առ գերապատիւ Աստուծոյ մերոյ, և առ
քրիստոսաւեր և բարեպաշտ ժողովուրդք
որք բնակիք պանդխտութեամբ ի [Տե?]պա
և ի Մարաթա, ի Նափա և ի Պուշարիքն,
և յայլ շուրջ ի կայ գեղանդ, առ Ասորի և առ
Հոռոմ և առ Հայ» և գրված է «ի Սուրբ լեռ-
նէս ի Տաւսիս ձորոյս»¹⁷: Ուրեմն՝ նամակն
ուղղված էր հեղինակի ծննդավայր Մարա-
թայի և հարակից շրջանների բնակիչներին,
շրջաններ, որոնց մտքողությունը կազմում
էր Դուրք գալաթը: Իսկ Դուսի (կիլիկյան
ուղղագրությամբ՝ Տաւսիս) ձորը, որտեղից
գրված է նամակը, անունն էր այն վայրի,
որ գտնվում էր Այգեկի վանքը: Այս հաշ-

վով՝ նամակը գրված է ավելի ուշ, քան
1210 թվականը, երբ Վարդանը հաստատ-
վեց Այգեկում, և այն էլ՝ բավականին ուշ,
քանի որ ասում է, թէ «ի վաղ ժամանակաց
կայր ի սիրտ իմ զալ և տեսանել զձեզ»¹⁸:
Վարդան Այգեկցին սույն նամակով իր հո-
գեվոր որդիներին՝ Դուրք գալաթի հայ, ա-
սորի և հոռոմ (հույն) բնակիչներին հորդո-
րում է վերջ տալ կրոնական փոխադարձ
վեճերին, այլ խոսքով՝ ազգամիջյան խոտ-
վություններին:

Ի՞նչն էր առիթ տվել Վարդան Այգեկցուն՝
այս նամակը գրելու: Այդ մասին տեղեկա-
նում ենք նամակի հետևյալ տողերից.

«Ապա շատ զարմացումն կայա զիս, զի
լսեցի երեք տարոյ յառաջ, թէ սաստանայ
գոչեաց ի մէջ քրիստոնէիցց, և հայհոյել
կուտայ ձեզ զճշմարիտ որդին Աստուծոյ
զՅիսուս Քրիստոս զգառնն անմեղ, և զո-
րմն չարութեան իւրոյ սերմանեաց ի վերայ
քրիստոնէիցց, և ցնծայ ի մէջ ձեր, որպէս և
ի մէջ Հրեիցն որք խաչեցին զորդին Աստու-
ծոյ»¹⁹:

Վեճերի բնույթը պարզվում է հաջորդ տո-
ղերից.

«Քանզի Հայն ասէ թէ ե՛ս եմ լաւ և ընտիր
քրիստոնէայ, և հայհոյէ անմտութեամբ զՀո-
ռոմն և զԱսորին: Եւ Հոռոմն ասէ հպարտու-
թեամբ թէ ե՛ս եմ ազգ առաջին, սուրբ և
գիտնական և ուղեղ հաւատ, և Հայն և Ասո-
րին ոչ են ի կարգս քրիստոնէութեան և ոչ
ունին առ Աստուած բաժին, և այսպէս նա-
խատէ և հայհոյէ: Իսկ Ասորին ասէ ծածուկ
նենգութեամբ և կեղծաորութեամբ, թէ ե՛ս
եմ ընտիր քրիստոնէայ և ունիմ անարատ
հաւատ և սուրբ կարգ, և Հոռոմն և Հայն
լցեալ են չար հերձուածաւք, ատարս են
յԱստուծոյ և զՅիսուս Քրիստոս ոչ ճանաչեն
և դժոխաց են ժառանգ»²⁰:

Պարզ է, որ Ասորիքի ազգային-կրոնա-
կան երեք գլխավոր համայնքների միջև սուր
խարվածությունն ու ծանր խոտվությունն էր
ծայր առել և այդ երևույթի վրա մտահոգու-
թեամբ էր նայում Վարդան Այգեկցին: Նա-
մակում սկզբից իսկ տեսնում ենք, որ հեղի-
նակն ակններն կերպով խաղաղասեր ու հաշ-
տարար ոգի է ցուցաբերում վիճող կողմերի
հանդեպ, կարողանում է վերևից նայել կող-
մերի վրա՝ բացարձակ անխտրականու-
թեամբ: Նա թէ՛ հայրաքար հանդիմանում է
և թէ՛ անեծքի լեզվով սպառնում հավասա-
րապէս բոլորին.

«Ո՛վ յիմար և անմիտ Հայ, թէ միայն դո՛ւ
ես քրիստոնէայ և ժառանգ արքայութեանն,

¹⁴ Անդ, էջ 132բ—143ա:

¹⁵ Անդ, էջ 149ա—151ա:

¹⁶ Անդ, էջ 151ա—157ա:

¹⁷ Անդ, էջ 151ա—151բ: Հիշատակվող աշխարհա-
գլխական անուններից առաջինը ձեռագրում եղծված
է, միայն վերջին երկու տառերն են մնացել՝ «...պա»:
Մենք այդ անունը լրացնում ենք որպէս **Տեպա** (կի-
լիկյան ուղղագրությամբ), այսինքն՝ **Դեբա**, ըստ
Պողոսմետի՝ **Ճիթա**, որ է այժմյան Այնթապ: Իսկ
Պուշարիք անունը գուցե **Քլպաշար**-ն է:

¹⁸ Անդ, էջ 151բ:

¹⁹ Անդ, էջ 152ա:

²⁰ Անդ, էջ 152ա—152բ:

և այլ ազգ չեն, ապա Աստուած թող զմի որ ի ձեռն չտանի յարքայութիւնն: Ո՛վ աղաւաշ և սրբակոյր Ասորի, թէ դո՛ւ միայն ես քրիստոնէայ և բաժին Աստուծոյ, և այլ ազգ չկայ, ապա Աստուած թող զմի որ ի ձեռն չտանի յիր հանգիստն: Ո՛վ խոյ և խաւարեալ Հոռոմ, թէ դո՛ւ միայն ես քրիստոնէայ և ընտիր աստուածապաշտ, և արժանատր վեփինն Երուսաղէմի որ է մայրն Պետրոսի և Պօղոսի, և այլ ազգ չկայ, ապա Աստուած թող զմի որ ի ձեռն չաճէ յիր առագաստն և ի տաճարն»²¹:

Ահա և հովվական խրատը.

«Ապա աղաչեմ զձեզ, որդեա՛կք, ամէն ազգ կալէք զիր եկեղեցուն սահմանն և սովորութիւնն և զկարգն՝ զպատարագելն, զտաճելն, զպահքն, զմկրտելն, և առ իրար սիրով կեցիք և խաղաղութեամբ, որ Քրիստոս հանգչի առ ձեզ: Զի զհաւատքն ուղիղ պահիցէք, զամենատրբ երրորդութիւնն հաւասար և համագոյ և անբաժանելի դաւանեցէք, և զԲանին Աստուծոյ մարդեղութիւնն ճշմարիտ դաւանեցէք, և վասն կարգաց եկեղեցոյ մի՛ քննէք և բանավէճ լինիք և անհանգստիք. զայս մեծն Դիոնիսիոս Աթենաքին գրեաց առ Թէոփորոս աշակերտն իւր որ էր հայր վանաց»²²:

Վարդան Այգեկցոյ «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» գրվածքում ի հայտ եկող ազգային ու կրոնական համերաշխության այս անկողմնակալ ոգին ըստ էության ներդաշնակ է նրա մյուս գրվածքների ոգու հետ: Եթե համեմատության առնենք սույն գրվածքը «Արմատ հաւատոյ» գրքի հետ, կտեսնենք, որ երկուսի միջև եղած տարբերությունը լոկ արդյունք է երկու գրվածքների միջև եղած նպատակների տարբերության: «Արմատ հաւատոյ»-ն կյանքի է կոչվել հայ եկեղեցին պաշտպանելու համար Բյուզանդիայից և լատինական Արեւմուտքից ներմուծվող քաղկեդոնական քարոզչության դեմ, ուստի և նրա նպատակն էր պարզապէս ինքնապաշտպանության պայքար կազմակերպել Կիլիկիայում դրոսից թելադրվող գաղափարական հարձակումների դեմ, քայքայողական անհանդուրժելի քննադատությանը պատասխանել պաշտպանողական աններող քննադատությամբ: Այս գաղափարն ինքնին իսկ գերծ լինելով հարձակողական բնույթից, «Արմատ հաւատոյ»-ն ներքին կյանքի անդորրությանն էր ձգտում Կիլիկիան Հայաստանում, ուր ընդունված կարգուսարքն արդեն ապահովում էր այլադավան այլազգիների հաշտ ու խաղաղ համակեցությունը հայերի հետ՝ ինչպէս

Այգեկցին ինքն է ասում, թէ «ի տուն իշխանութեանս Հայոց են Ասորի իշխանք և Հոռոմք, և ասորի վաներ և հոռոմ և վրացի, և ունին պատիւ և ապրանք ի տանէս Հայոց, և կան խաղաղութեամբ և սիրով ամէն ազգ յիր եկեղեցոյն կարգքն և ի սահմանն, և զԱստուած փառատրեն»²³: Ուստի՝ «Արմատ հաւատոյ»-ն ըստ էության ազգային-կրոնական համերաշխության գաղափարը պաշտպանող գիրք էր:

Իսկ «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» նամակը բոլորովին այլ պայմանների ծնունդ էր: Այստեղ խնդիրը կայանում էր ոչ թէ հայրենիքում կազմակերպված մի գաղափարական հարձակման դեմ ինքնապաշտպանության դիմելու մեջ, այլ նրա սահմաններից դուրս գտնվող մի շրջանում կրոնական վեճերի ձևի տակ տեղի ունեցող ազգամիջյան խռովություններ մարելու, թույլ չտալու, որ նրանք զարգանան: Տեղական բնույթ կրող այդ վեճերի հետագա հավանական զարգացման մեջ Վարդան Այգեկցին Կիլիկիան Հայաստանի շահերի տեսակետից արդյոք տեսնո՞ւմ էր որևէ վտանգ, ասենք՝ «Արմատ հաւատոյ»-ով կազմակերպված պայքարը դժվարացնելու առումով: Դժվար է հաստատ բան ասել: Բայց, անկախ բոլոր տեսակի հավանականություններից, «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» գրվածքը կա և մնում է որպէս նրա հեղինակի լայնամիտ, հաշտարար ու խաղաղասեր տրամադրությունների պերճախոս վկա:

Եթե Վարդան Այգեկցին «Արմատ հաւատոյ»-ով հայ եկեղեցու ինքնուրույնության ու ազգայնության գաղափարն էր պաշտպանում, ապա «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» նամակով նա նույն առումով իր պաշտպանության տակ էր առնում հաւասարապէս նաև մյուս այլադավան եկեղեցիները, համաքրիստոնէական նշանաբանով առաջ քաշելով եկեղեցիների միասնության գաղափարը, որ ընթերցողներին գրելով, թե «դուք ի մի Քրիստոս կոչեցայք և ի մի աւագան մկրտեցայք, ի մի հայր և ի մի սուրբ հոգի լուսատրեցայք»²⁴:

Վարդան Այգեկցին հայ միջնադարյան մատենագրության մեջ հանդես է գալիս որպէս եկեղեցու ազգայնության և ազգային եկեղեցիների համերաշխության գաղափարախոս:

Հրատարակության ենք տալիս նրա «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» նամակի բնագիրը:

²¹ Անդ, էջ 153ր:

²² Անդ, էջ 155ա:

²³ Անդ, էջ 156ա:

²⁴ Անդ, էջ 153ր:

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

151ա

ՎԱՍՆ ԾԱՏԱՀԱԶ ՔՆՆՈՂԱՑՆ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ

(Զեռ. № 8356)

151բ Առ գերապատուեալ և սուրբ քահանայքդ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և առ քրիստոսաւեր և բարեպաշտ ժողովորդքդ ॥ որք բնակիք պանդրիստութեամբ ի [Տե?]պա և ի Մարաթա, ի Նաւթա և ի Պուշարքըն (sic), և յայլ շուրջ ի կայ գեղանդ, առ Ասորի և առ Հոռոմ և առ Հայ, գրեմ ի Սուրբ լեռնէս ի Տաւսիս ձորոյս, մեղաւոր հողս Վարդան որ ի Մարաթոյ Վերնոյ: ՅԱստուծոյ հարե շնորհք ընդ ձեզ, և խաղաղութիւնն Յիսուսի Քրիստոսի՝ ծոցածին Բանին Աստուծոյ եկեացէ և հանգիցէ ի վերայ ձեր հայրական հոգւոյն զարութեամբ, և արհմեացէ զձեզ հոգւով և մարմնով և [զ]գաւակս ձեր և զամաւսունս ձեր, զէնն և զանդատանս ձեր, և բառնայ զգաւումն բարկութեան իւրոյ ի ձէնց և յանասնոց և ի սահմանաց ձերոց, և ջնջեցէ զմոլոս մնջեցելոց ձերոց Քրիստոսի սուրբ և անապական արիւնն որ հեղաւ ի վերայ խաչին վասն Ադամայ և ծննդոց մորա: Եւ գիտացնեմ ձեզ, հոգևոր որդեակք իմ, որ ի վաղ ժամանակաց կայր ի սիրտ իմ գալ և տեսանել զձեզ և խաւել առ ձեզ զհրամանս արիւնացն Աստուծոյ, և մեղք իմ խախալանեաց զիս և տկարութիւն ծերութեանս, վասն որոյ և ոչ կարացի գալ. այլ խորհեցայ գրով խաւել ընդ ձեզ զհրամանս արիւնացն Աստուծոյ: Ապա շատ զարմացումն կալաւ զիս, զի լսեցի երեք տարոյ յառաջ, թէ սատանայ գոչեաց ի մէջ քրիստոնէիցդ, և հայհոյել կուտայ ձեզ զճշմարիտ որդին Աստուծոյ զՅիսուս Քրիստոս զգառնն անմեղ, և զորովն չարութեան իւրոյ սերմանեաց ի վերայ քրիստոնէիցդ, և ցնծայ ի մէջ ձեր, որպէս և ի մէջ Հրէիցն որք խաչեցին զորդին Աստուծոյ: Քանզի Հայն ասէ թէ եւս եմ լաւ և ընտիր քրիստոնէայ, և հայհոյէ անմտութեամբ զՀոռոմն և զԱսորին: Եւ Հոռոմն ասէ հպարտութեամբ թէ եւս եմ ազգ առաջին, սուրբ և գիտնական և ուղեղ հաւատ, և Հայն և Ասորին ոչ են ի կարգս քրիստոնէութեան և ոչ ունին առ Աստուած բաժին, և այսպէս նախատէ և հայհոյէ: Իսկ Ասորին ասէ ծածուկ նենգութեամբ և կեղծաւորութեամբ, թէ եւս եմ ընտիր քրիստոնէայ և ունիմ անարատ հաւատ ॥ և սուրբ կարգ, և Հոռոմն և Հայն լցեալ են չար հերձուածաւք, ատար եմ յԱստուծոյ և զՅիսուս Քրիստոս ոչ ճանաչեմ և դժոխոց են ծառանգ: Եւ այսպէս սատանայ խաղաղ և ցնծայ ի մէջ ձեր, և զանմեղն և զանարատն Յիսուս Քրիստոս տայ ձեզ հայհոյել և ի խաչ հանել որպէս արարին Հրէայքն յԵրուսաղէմ, և դժոխոցն [արժանի] առնէ զձեզ, ո՛վ ողորմելիք, և դուք կուրացեալ էք և

ոչ իմանայք: Ապա թէ դուք ձեր լեզուաք և ձեր վկայութեամբ կամիք լինել սուրբ և անարատ հաւատով, առանց գրոց վկայութեան և քննութեան, ահա զայ խալիֆայն ի Բաքելոնէ, և խաւին ի Հայպաց, և նախատեն զձեզ առանց սուրբ գրոց վկայութեան, և ասեն թէ դուք ամենայն քրիստոնէայք ատար էք յԱստուծոյ և ոչ ճանաչէք զնա, զի երեք ատուած ասէք և արատաւոր ծնունդ ասէք Աստուծոյ՝ որպէս մարդոյ, և պաշտէք զհիպստ և զքար որպէս էին առաջին կուսպաշտքն: Յիմար և անմիտ Հոռոմ, խալ և խաւարեալ Ասորի, աղաւաշ և կոյր Հայ. զայս չէ՞ք լսել ի գրոց, որ ամենայն ॥ մարդ պիտի որ զիր կարգ և զհաւատն գովէ: Չգիտէ՞ք որ սատանայ առաց ի չար միտս իւր, թէ ես իրաւ եմ քան զԱստուած: Եւ Ադամ առաց, թէ՛ Աստուած, դու կործանեցիր զիս որ զկինս ետուր ինձ: Եւ կալէն զինքն իրաւ տեսաւ և զանմեղն Արեւ կապան: Եւ Մարիամ զՄովսէս խաչատաւիկաց որ ատուած կոչեցաւ: Եւ Վորիս և Գադան հայհոյեցին զՄովսէս, և երկիր կլաւ զնոսա: Եւ ստու մարգարէքն որ դիւարն խաւելին, զճշմարիտ մարգարէքն Աստուծոյ նախատէին և կախարդ կոչեցին: Ո՛վ խուրք և կոյրք, չէ՞ք ի լսել ի սուրբ Աւետարանն, որ անարեւն Հրէայքն զանարատ գառն Աստուծոյ զՅիսուս Քրիստոս, որ է ծնունդն սրտին աստուծոյ, և է խորհուրդ և քան և զարութիւն և իմաստութիւն և որդի Աստուծոյ հար, զնա Սամարացի և կախարդ և դիւահար և Բէկզիբոլ (sic) կոչեցին, և ասեցին առ Քրիստոս, թէ դու մարդ ես և զանձն քո Աստուած առնես: Չգիտէ՞ք որ հերձուածաւք հայրապետքն զճշմարիտ և զուղղափառ սուրբ հայրապետքն հայհոյեցին և անարգեցին, ստու ॥ համարեցին: Ո՛վ յիմար և անմիտ Հայ, թէ միայն դո՛ւ ես քրիստոնէայ և ծառանգ արքայութեանն, և այլ ազգք չեն, ապա Աստուած թող զմի որ ի ձէնց չտանի յարքայութիւնն: Ո՛վ աղաւաշ և սրբակոյր Ասորի, թէ դո՛ւ միայն ես քրիստոնէայ և բաժին Աստուծոյ, և այլ ազգ չկա, ապա Աստուած թող զմի որ ի ձէնց չտանի յիւր հանգիստն: Ո՛վ խուրք և խաւարեալ Հոռոմ, թէ դո՛ւ միայն ես քրիստոնէայ և ընտիր աստուածապաշտ, և արժանաւոր վերինն Երուսաղէմի որ է մայրն Պետրոսի և Պաւլոսի, և այլ ազգ չկա, ապա Աստուած թող զմի որ ի ձէնց չաճէ յիւր առաքաւսն և ի տաճարն: Ընդէ՞ք ոչ հայիք ի տունն Մալիմնաց, թէ քանի ազգ են բաժանեալ լեզուաք, և կան խաղաղութեամբ և սիրով առ իրար, ի մի սահման և ի կարգ, զոր առաջ-

153ա

153բ

նորոյն իրեանց Մահմէտ կարգադրեալ և սահմանեալ զնոսա: Եւ դուք ի մի Քրիստոս կոչեցայք և ի մի աւագան մկրտեցայք, ի մի հայր և ի մի սուրբ հոգի յուսարեցայք, և ի մի հայր և ի մի սուրբ հոգի յուսարեցայք ॥^{154a} Դարձեալ նախատեք զիրար և հայհոյեք ॥^{154a} ասացին, թէ երբ պիտէր նա Բանն Աստուած հետանայր ի մարմնոյն և փախէր, և երբ պիտէր նա ի մարմնին: Եւ չարն Ետիքէս առաջ թէ առ աշաւք շրջեցաւ Քրիստոս յաշխարհի, և այլ անթիւք այսպիսի բանք: Ո՛վ յիմարք և անմիտք, չգիտէ՞ք որ այս չէ ժամ զհաւատքս քննել կամ հաստատել, զի լցաւ երկիր գիտութեամբ Աստուծոյ. այժմ որ ունի՞ ա՛յն է զինչ որ ունի: Այս գործոց ժամ է և ապաշխարութեան, զի կարճեցաւ ժամանակս և եկաք հաւասար ի դուռն դատաստանին, զի սակաւ մի ժամանակ է մնացեալ և յետ առնելոյն զերուսաղէմ յալլ ազգացն, յայտնի ննոնն և մերձի արն դատաստանի: Հոռոմն ասէ թէ ե՛ս ծանեալ առաջ զՔրիստոս, և Աստի՛ն ասէ՛ թէ ե՛ս, և Հայն ասէ՛ թէ ե՛ս: Ահա ձեր անմտութիւնդ յայտնեցաւ. ապա սատանայ քան զամէնդ էր յառաջ առ Աստուած, ապա նա լա՛ւ է քան զձեզ, թէ առաջինն մեծ է քան զյետինն: Ո՛վ ողորմիկիք, առ Աստուած չկայ առաջին և վերջին, զի որ զբարին գործէ, ա՛յն է առաջին առ Աստուած: ॥ Որպէս և իմ ճշմարիտ Յիսուս Քրիստոսն որդին և Բանն Աստուծոյ հրամայէ, թէ եղիցին առաջինք՝ յետինք, և յետինք՝ առաջինք. զի որ զտասն և զմի ժամն յարն գործեաց և որ զմի ժամն, նա զվարձն միասկէս ետ ողորմածն Աստուած, զի նա չէ իբրև զձեզ չար և լցեալ նախանձով: Զի թէ աչսար գայ յարեմտից աստանապաշտ մի, և մկրտի յանուն հայր և որդոյ և սուրբ հոգւոյն ի չարչարանքն Քրիստոսի և ի մահն և ի յարութիւնն, և լինի բարեգործ անկի քան զքեզ, լաւ և մեծ է նա առ Աստուած քան զքեզ որ ի հազար պատէ ի վեր քրիստոնեայ եւ, թէ ե՛ս յազգէն Պետրոսի և Պաղոսի ես: Զգիտէ՞ք որ ել Յուդա որ առաջին էր, և եմուտ Մատթիա ի դասս առաքելոցն, որ վերջին էր: Զգիտէ՞ք որ քահանայական շնորհքն Աստուծոյ է և ոչ մարդոյ. քանզի գտաք ի գիրս, որ կախարդ և սատանապաշտ պապ և պատրիարք նստան ի Կոստանդինուպոլիս և ի Հոռոմ, բայց Աստուած զիր շնորհքն չարգիլեաց (sic) ի քրիստոնէիցն ॥ ի ձեռնադրելն: Նոյնպէս և այսար Աստուած ըստ գործոց իրեանց դատելոց է զառաջնորդքն և զքահանայքն, և զիր շնորհքն չխափանէ ի քրիստոնէիցն ի մկրտելն, ի պսակելն, ի խոստովանելն և ի ձեռնադրելն:

Ապա աղաչեմ զձեզ, որդեա՛կք, ամէն ազգ կալէք զիր եկեղեցւոյն սահմանն և սովորութիւնն և զկարգն՝ զպատարագելն, զտանելն, զպահքն, զմկրտելն, և առ իրար սիրով կեցիք

և խաղաղութեամբ, որ Քրիստոս հանգչի առ ձեզ: Զի զհաւատքն ուղիղ պահեցէք, զամենասուրբ երրորդութիւնն հաւասար և համագոյ և անբաժանելի դասանցէք, և զԲանին Աստուծոյ մարդեղութիւնն ճշմարիտ դասանցէք, և վասն կարգաց եկեղեցւոյ մի՛ քննէք և բանավէճ լինիք և անհանգստիք. զայս մեծն Դիոնիսիոս Աթենացին գրեաց առ Թէոդորոս աշակերտն իւր որ էր հայր վանաց: Եւ ահա, որդեա՛կք, ցուցանեմ ձեզ գործ մի զարմանալի գորարար սուրբ անտարանիչն Յովնան[ն] էս: ॥ Զի Պետրոս ը[զ]գատիկն ի կիրակէ սահմանեաց ի Հոռոմ որպէս և էր, և Յովն[ն] հաննէս յԵփեսոս հետ Հռիփցն սահմանեաց ըզգատիկն ի յաւոր հինգշաբաթոց. և ուր հայրապետ փոխեցան յետ նորա մինչև ի Պաղիկրատէս և հետ Ջիսմոյն առնէին ը[զ]գատիկն, և կոխ չկայր զի հաւատքն մի էր: Եւ մնաց այսպէս մինչև ի Գրիգոր Աստուածաբան և ապա նա աղաթիւք ուղղեաց և միադրեաց ը[զ]գատիկն: Ո՛վ որդեակք, հաւատով անարատ լիք, և բարի գործաւք և խաղաղութեամբ և սիրով բնակեցէք, և յամենայն ար անտեաց տանեցէք, և ծննդեան, և յայտնութեան, և խաչելութեան, և յարութեան, և համբարձման, և հոգւոյ զալստեան, և առաքելոց, և մարգարէից, և Աստուածածնի, և խաչի, և հայրապետաց, և մարտիրոսաց, և սուրբ հրեշտակաց. և թէ այդ մեղք է, նա ես տամ Աստուծոյ պատասխանի: Եւ մարդ որ աղաթէ առ Աստուած, թէ զմարմնաւոր մարդ առաքէ ի դժոխս, եղիցի ժա՛ննանց դժոխոց անձն նորա: Ո՛վ որդեակք, ի տուն իշխանութեանս Հայոց եւն Ասորի իշխանք և Հոռոմք, և ասորի վանք և հոռոմ և վրացի, և ունին պատիւ և ապրանք ի տանէս Հայոց, և կան խաղաղութեամբ և սիրով ամէն ազգ յիւր եկեղեցւոյն կարգն և ի սահմանն, և զԱստուած փառաւորեն:

Յառաջագոյն գրեցին Հոռոմոց և Ասորոց և Հայոց առաջնորդքն և հայրապետքն, և պնդով նշովս եղին ի վերայ և ասացին, թէ ամենայն ազգ քրիստոնեայ թող յիւր ազգն առնեն խընամութիւն, որ չխառնակի մի ազգն ի միւսն, և յիւր ազգն մկրտի և հաղորդի. և այս բարի էր զորս սահմանեցին, զի, ո՛ր գիտէ, թէ լինէր հերձուած ինչ ի մի ազգն, նա չխառնէր ի միւս ազգն: Բայց ժողովորդք ազգացն ոչ պահեցին զհրամանս առաջնորդաց իրեանց: Եւ ահա ի Կեսարիա և ի Մելիտինի, ՚նուհա և յԱնտիոք, և ի մեր աշխարհս Կիլիկիեցոց անխտիր կոխանամեան և կոստանուն հարսն զդատերս միմեանց, Ասորիւն և ॥ Հայն և Հոռոմն, և ոչ կարացին խափանել զնոսա ոչ հին առաջնորդքն և ոչ նորա: Լի՛ք և դուք այսպէս, և պաշտեցէք ամենայն ազգ զիր կարգն և զսահմանն յիւր եկեղեցին: Եւ զայս քաջ գիտացիք, զի որ ի ձե՛նք խիստ պարծենալ թէ ես անարատ եմ հաւատով և կարգով, սուտ է բերան

¹ Զեռագրից մեկ թերթ ընկած է:

157ա

նորա. քանզի սատանայ բնաւ ոչ եթող եկեղեցի և ազգ և մարդ անարատ և անվնաս, այլ դեղնալ ապականեաց զամենայն ազգ և զեկեղ[եց]ի, և իրք մի վնաս և չար սերմանեաց ի նոսա որ է արոմմ (sic). քանզի շրջեցայ ես շատ ժամանակ ընդ աշխարհս, և տեսայ աչաւք իմաւք զամենայն ազգ քրիստոնէայ: Ապա թէ լինի ի միջի ձերում խոռվարար մարդ՝ ստոյգ սատանայ խաւսի բերանով՝ նորա. դուք նշանակեսցիք զնա և գրեցէք առ մեզ, ես ողորմութեամբն Աստուծոյ յիւր գլխաւոր առաջնորդէն առնում իւր անէծք և հալածեմ զնա, թէ Հայ է, և թէ Հոռոմ, և թէ Ասորի: Բայց աղալչանաւք սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց ջնջեսցէ Աստուած և բառնայ զչարն և զշատահաջ մարդն ի միջոյ ձերմէ որ տեսանէք աչաւք ձերովք: Եւ սուրբ հոգին հայրական արհմեացէ

զամենայն ազգս քրիստոնէից, և պարգևեսցէ նոցա անարատ և ուղիղ հաւատս: Եւ թէ կայ իրք մի չար լեկեղեցիս քրիստոնէից, զայն չբահամարի նոցա ի մեղս, զի մարդիկ են տկարամիտք, և սատանայ խաւսալ է և նենգաւոր: Եւ զամենայն որդիս Աղամայ որ այս տկար և ողորմելի մարմնովս են, փրկեսցէ Աստուած ի մեղաց և ի դժոխոցն, և տայ ձեզ ամենայն քրիստոնէիցոյ հոգի զղջման և ապաշխարութեան, և սուրբ և ուղիղ հաւատս որ ի հայր և յորդի և ի սուրբ հոգին: Եւ վասն Աստուծոյ աղաչեմ զձեզ ի բաց թողէք ի ձեռն զտըրտունց և զքամբասանք, և հոգացէք զմեղս ձեր և զահագին ար դատաստանին որ խորհրդոց և բանից համարս պահանջելոց է ի մեռն ահաւոր դատաւորն Բրիստաւ:

Հրատարակեց՝ Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

